



հայաստան համահայկական հիմնադրամ
The Armenia Fund



ԳՅՈՒՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ
Rural Development Program

ԱՄՍԱԹԻՎ: 8 ՓԵՏՐՎԱՐԻ, 2008
ՈՒՄ ԿՈՂՄԻՑ: ԳՅՈՒՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
ԱՌԱՐԿԱ: «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԱՄԵՆՇԱՐԱԹՅԱ ԶԵԿՈՒՅՑ

Այս շաբաթ մեր զեկույցի առանցքային թեման է Տավուշի մարզի Ակնաղբյուր համայնքում Գյուղական զարգացման ծրագրի շրջանակներում մի շարք ծրագրերի մեկնարկն է: Այս ծրագրերի իրականացումը հնարավոր է դարձել Շվեյցարիայի հայ համայնքի օժանդակությամբ: Այս շաբաթ մենք վերջապես ավարտեցինք առաջին վերապատրաստման DVD-ի համար տեսանյութերի հավաքման գործընթացը: Ներկայումս նյութերը մոնտաժվում են Արմենիա ՋԸ տեխնիկական օժանդակությամբ:

Մենք ուրախությամբ ազդարարում ենք ամենշաբաթյա զեկույցներում նոր բաժնի մեկնարկը: Հանդիպեք մարդկանց բաժինը նվիրված է բոլոր այն անձանց ում շնորհիվ հնարավոր է դառնում Գյուղական զարգացման ծրագրի նախաձեռնությունների իրականացումը ինչպես նաև բոլոր նրանց ով չնայած դժվարություններին շարունակում է ապրել եւ կառուցել իրենց կյանքը սահմանամերձ գյուղական համայնքներում: Այսօրվա հանդիպեք մարդկանց բաժինը նվիրված է տիկին Շաքե Հավանին, որը ներկայումս աջակցում է Ազատամուտ համայնքի գրադարանի վերանորոգմանը:

ԱԿՆԱՂԲՅՈՒՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԵԿՆԱՐԿ



Շվեյցարիայի հայ համայնքը առաջիններից մեկը իր աջակցությունը առաջարկեց սահմանամերձ գյուղերի համապարփակ զարգացմանն ուղղված ծրագրին: Ավելին՝ համայնքը որոշեց մի շարք ենթակառուցվածքային բարեփոխումների ծրագրեր իրականացնել Տավուշի մարզի Ակնաղբյուր գյուղում, որը Գյուղական զարգացման ծրագրի առաջին փուլում վեց գյուղերից մեկն է:

Համայնքում իրականացվելիք առաջին երկու ծրագրերն ուղղված կլինեն գյուղի համար ամենահրատապ հանդիսացող խմելու եւ ոռոգման ջրի խնդրի լուծմանը: Շվեյցարիայի հայ համայնքի աջակցությամբ «Հայաստան» հիմնադրամը կպատվիրի ծրագրերի մանրամասն նախագծերը, որից հետո հնարավոր կլինի անցնել ծրագրերի ֆիզիկական իրականացման գործընթացին:

Գյուղական համայնքների առջեւ ծառայած հազար եւ մեկ խնդրի գրքում, ջրի հարցը ամենայն հավանականությամբ ամենաշատ հիշատակումները կստանար: Ջրի հետ կապված խմորների մեծ մասը կապված է ջրատար խողովակների



անբավարար վիճակի հետ: Այս խողովակների մեծ մասը անցյալ դարի կեսերին են տեղադրվել: Անցումային շրջանում գյուղական համայնքների բյուջեներում բավական միջոցներ չկային խողովակների պահպանման եւ վերանորոգման համար: Այժմ երբ համակարգը քիչ թե շատ գործում է այդպիսի միջոցներ գոյացել են, սակայն շատ դեպքերում հնամենի խողովակաշարերը արդեն անվերականգնելի վիճակում են:

Ակնհայտ է, որ հնամենի խողովակների փոխարինումը եւ համակարգի ընդհանուր բարեփոխումը չեն կարող կատարվել համայնքների խիստ սահմանափակ բյուջեների միջոցներով եւ խնդրի լուծումը կարող է տրվել միայն արտաքին աջակցությամբ: «Հայաստան» հիմնադրամը իր գոյության ավելի քան տասնհինգ տարիների ընթացքում այդպիսի աջակցության հուսալի աղբյուր է հանդիսացել եւ Գյուղական զարգացման ծրագիրը շարունակելու է այդ ավանդույթը: Ենթակառուցվածքի բարեփոխմանն ուղղված ծրագրերը տնտեսական աջակցության նախաձեռնությունների հետ մեկտեղ հանդիսանում են Գյուղական զարգացման ծրագրի հիմնարար տարրերը: Մենք համոզված ենք, որ միայն նորմալ աշխատող ենթակառուցվածքի պայմաններում է հնարավոր ստեղծել զարգացման եւ ավելի լավ կյանք կերտելու համար բարենպաստ միջավայր:

Շվեյցարիայի հայ համայնքը ձեռնամուխ է եղել նաեւ Ակնաղբյուր գյուղում միանգամից երեք փոքր ծրագրերի իրականացմանը: Բոլոր այդ ծրագրերը ուղղված են գյուղական համայնքների եւ քաղաքների միջեւ տեղեկատվական բացի լրացմանը:



Այս ծրագրերի իրականացման շնորհիվ Ակնաղբյուրի համայնքային գրադարանը կստանա ժամանակակից համակարգիչ եւ տպիչ, ինչպես նաեւ հեռուստացույց, DVD նվագարկիչ: Բացի այդ գրադարանը մեկ տարի բաժնևարդագրություն կստանա Հայաստանի բոլոր խոշոր թերթերին:

Այս ծրագրերն ուղղված են արագ եւ զգալի փոփոխություն մտցնելու համայնքի բնակիչների կյանքում ինչպես նաեւ խոստում են պարունակում ավելի մեծ եւ հիմնարար փոփոխությունների, որոնք առաջիկայում սպասվում են համայնքում:

ՀԱՆԴԻՊԵՔ ՄԱՐԴԿԱՆՑ՝ ՇԱՔԵ ՀԱՎԱՆ

Եվ այսպես, հանդիպեք՝ Շաքե Հավան: 1999-ին նա իր ընտանիքի հետ տեղափոխվել է Հայաստան Միացյալ Նահանգներից: Տիկին Հավանն այժմ հանդիսանում է Երեւանի կենտրոնում գտնվող Արթրիչ գրախանութ սրճարանի տնօրենը: «Հայաստան» հիմնադրամի կողմից Գյուղական զարգացման ծրագրի



մեկնարկի պահից տիկին Յավանը հետաքրքրվեց այս նոր նախաձեռնությամբ եւ հնարավորություն էր փնտրում այդ ծրագրին աջակցելու: Երբ առաջ քաշվեց գյուղական համայնքների վերանորոգման խնդիրը՝ տիկին Յավանն արագ արձագանքեց եւ պատրաստակամություն հայտնեց աջակցելու Լուսահովիտ եւ Ագատամուտ գյուղերի գրադարանների վերականգման նախաձեռնությանը:

Գրքերը Շաքեյի կյանքի, նրա մասնագիտական գործունեության եւ նրա կատարած բարեգործության անբաժանելի մասն են: Վերջերս, նա իր միջոցներով հրատարակեց 9-14 տարեկան երեխաների ստեղծագործությունների ժողովածուն: Տարիների ընթացքում տիկին Յավանը համագործակցել է հրատարակիչների հետ, հնարավորինս մեծ քանակությամբ գրքեր մատչելի գներով մարզեր հասցնելու համար:



«Ես հավատացած եմ, որ գրքերը պետք է գնել եւ ոչ թե ստանալ հենց այնպես,- գտնում է Շաքեն: Ամենալավ բանն ինչ մենք կարող ենք անել այն մարդկանց համար ովքեր հնարավորություն չունեն գրքեր առնելու Երեւանի գրախանութներից դա այդ գրքերը նրանց առաջարկելն է այն գնով, որը իրատեսական կլինի նրանց համար:

Ես չեմ ցանկանում, որ որեւէ այլ երկիր ազդի իմ մշակույթի վրա: Մենք պետք է ինքներս աշխատենք մեր մշակույթը պահպանելու համար: Մենք պետք է գործողությունների հստակ ծրագիր մշակենք:

Եթե վերանորոգում ես դպրոցը եւ անուշադրության են մատնում մնացած գյուղը ակնհայտ է, որ արածի արդյունավետությունը շատ սահմանափակ կլինի: Այսպիսով հնարավոր չէ ուղղակի վերանորոգել գրադարանը եւ հեռանալ: «Հայաստան» հիմնադրամի միկրոշրջանի մոտեցումը շատ հոգեհարազատ էր ինձ, քանզի հիմքում ընկած է համապարփակ զարգացման գաղափարը, որտեղ բոլոր ծրագրերը փոխկապակցված են:

Մարդիկ ասում են, որ այլեւս ոչ ոք գիրք չի կարդում,- ավելացնում է Շաքեն: Բայց գրադարանը կարող է հանդիսանալ նաեւ որպես համայնքային կենտրոն: Ճիշտ վերապատրաստմամբ եւ մոտեցմամբ հնարավոր է դրական միջավայր ստեղծել գրադարանում: Հնարավոր է ստեղծել մի տեղ, որտեղ մարդիկ կարող են հավաքվել եւ խոսել գրականության, մշակույթի եւ քաղաքականության մասին: Իմ կարծիքով գրադարանում պետք է լինի համակարգիչ, հեռուստացույց, DVD-ների լավ հաքածու, թերթեր եւ ամսագրեր, նույնիսկ նարդի, ինչու ո՞չ: Խնդիրը պատերը ներկելով եւ պահարանները գրքերով լցնելով չի լուծվում: Ինքը գրադարանի մեջ նոր կյանք շնչել եւ եթե տաս այցելուից նույնիսկ երեքը որոշեն գիրք կարդալ՝ այս նախաձեռնությունը հաջողված է: